Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 38978/03
Վճիռը կայացվել է. 27.05.2008
Ուժի մեջ է մտել. 27.08.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.02.11/8(674)

Փաստերը

2003 թվականի մարտի 15-ին դիմումատուն գրանցվել է թիվ 12 ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում մեծամասնական ընտրակարգով թեկնածու գրանցվելու համար: Ընտրատարածքային հանձնաժողովին ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթեր, ներառյալ՝ սեփականության մասին հայտարարագիրը: 2003թ.-ի ապրիլի 28-ին թիվ 12 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին դիմումատուի անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքի վերաբերյալ: 2003թ.-ի ապրիլի 29-ին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ ի պատասխան Ընտրական հանձնաժողովի կողմից ուղարկված գրության, տեղեկացրել է, որ բնակարանում, որտեղ բնակվում է դիմումատուն, գրանցված են վեց անձ, ներառյալ՝ դիմումատուն և հանդիսանում են բնակարանի համասեփականատեր: Սույն գրության հիման վրա ընտրական հանձնաժողովը որոշել է դիմումատուի թեկնածության գրանցումը ճանաչել անվավեր, քանի որ դիմումատուն գույքի սեփականության վերաբերյալ հայտարարագրի մեջ չէր նշել բնակարանում համասեփականատեր լինելու փաստի մասին: Դիմումատուն որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում: Նա նշել է, որ չի կեղծել որևէ փաստաթուղթ և բացատրել է, որ 1973թ.-ից բնակվել է բնակարանում և, որ բնակարանը Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1994թ.-ի հոկտեմբերի 27-ի որոշմամբ սեփականաշնորհվել է իր մոր անունով: 1994թ.-ի նոյեմբերի 18-ի սեփականության վկայագրի համաձայն՝ բնակարանն ամբողջովին պատկանում է իր մորը: 2003թ.-ի ապրիլի 29-ի գրությունը հակասում է այդ երկու փաստաթղթերին և չի համապատասխանում իրականությանը: Իր ընտանիքը բաղկացած չի եղել վեց անձից, քանի որ իր հայրը մահացել է 1982թ.-ին: Այնուհետև, նա նշել է, որ տեղյակ չի եղել այդ անհամապատասխանության մասին և իր հայտարարագիրը լրացրել է իր մոտ առկա պաշտոնական փաստաթղթերի հիման վրա: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սխալմամբ նույնացրել է կեղծարարություն և անճշտություն հասկացությունները: 2003թ.-ի մայիսի 8-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի հայցը՝ հիմնավորված համարելով, որ դիմումատուն, իր հայտարարագրում կեղծիք կատարելով, թաքցրել է բնակարանի նկատմամբ իր համատեղ ընդհանուր

սեփականության իրավունքի փաստը: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և ենթակա չի եղել բողոքարկման:

Դատարանի որոշումը

Իրավաչափ նպատակի տեսանկյունից անհրաժեշտ է խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ թեկնածուների կողմից ներկայացված սխալ տեղեկատվությունը կարող է մոլորության մեջ գցել ընտրողներին, այս առումով Դատարանը եզրակացրել է, որ նշվածը վերաբերում է նույնիսկ այն դեպքերին, երբ թեկնածուների կողմից ներկայացված տեղեկատվությունը ոչ միտումնավոր կերպով է պարունակում օբյեկտիվ անճշտություն: Այդուհանդերձ, Դատարանը նաև գտել է, որ չի կարելի տվյալ դեպքում դիմումատուի գործողությունները գնահատել անբարեխիղճ, քանի որ նա ունեցել է բոլոր հիմքերը ենթադրելու, որ ներկայացված տեղեկությունը ճշգրիտ է, առավել ևս՝ հաշվի առնելով այն, որ իր կողմից թույլ տրված սխալը մոլորության մեջ գցող սեփականաշնորհման կանոնների և պրակտիկայի արդյունք է, և որ դա չի կարող ողջամտորեն դիտվել որպես դիմումատուի մեղավորություն: Ավելին, տեղեկատվությունը, որը դիմումատուն ենթադրաբար թաքցրել է, վերաբերում է 64.7 քմ մակերեսի ընդամենը մի փոքր մասի սեփականատեր լինելու փաստին, և չի կարելի համարել, որ կար իրական վտանգ, որ նման փոքր նշանակություն ունեցող տեղեկությունը կարող է մոլորության մեջ գցել ընտրազանգվածին: Հաշվի առնելով դիտավորությունը հիմնավորող համոզիչ ապացույցների բացակայությունը, նրա սխալն արդարացնող օբյեկտիվ և բավարար պատճառների առկայությունը և նրա սեփականության իրավունքի չնչին բաժինը՝ Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի թեկնածությունն անվավեր ճանաչելն անհամաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին: Հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված ընտրվելու իրավունքը: Դատարանը սահմանել է 3,000 եվրո ոչ նյութական վնասի և 1,000 եվրո դատական ծախսերի դիմաց: